

ՀԱՅ ԵՎ ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱՆ

1962 թվականի նոյեմբերի 23—26-ը, շորս օր, նախ Կիևում և ապա Լվովում տեղի ունեցավ հայ և ուկրաինական ժողովուրդների պատմական կապերին ու եղբայրական բարեկամությանը նվիրված գիտական սեսիա, որը լսեց և քննարկեց Հայկական ՍՍՌ և Ուկրաինական ՍՍՌ ԳԱ պատմության ինստիտուտների, ինչպես նաև Լվովի Հասարակական գիտությունների ինստիտուտի գիտաշխատողների կողմից ներկայացված 26 զեկուցում և հաղորդում։ Ըստ հաջորդականության դա երկրորդ սեսիան էր. առաջինը կայացել էր 1959 թվականին։ Գիտական այդ զոմբիի նախաձեռնությունը, այսպիսով, կարծես թե տրադիցիայի ուժ է ստանում։

Բնականաբար, հայ և ուկրաինական պատմաբանների համագործակցությունն ու շփումը մեծապես նպաստելու է գիտական աշխատանքների հետագա կոորդինացմանը, հետևապես դրանց որակի բարձրացմանը։ Սեսիայի գիտական կարևոր նշանակությունը կայանում է նրանում, որ այնտեղ հանրագումարի բերվեցին գիտական այն աշխատանքները, որ վերջին տարիների ընթացքում ծավալել են Հայաստանի և Ուկրաինայի գիտնականները հայ-ուկրաինական պատմական կապերի և բարեկամության թեմատիկան մշակելու ուղղությամբ։

Սեսիայում կարգացված և քննարկված զեկուցումներն ու հաղորդումները աչքի էին ընկնում ոչ միայն իրենց խորությամբ և նպատակասլացությամբ, այլև թեմատիկայի բազմազանությամբ. իրենց բնույթով և ընդգրկած պատմական ժամանակաշրջանով դրանք տարբեր թեմաների, խնդիրների ու հարցադրումների լուծումը տվող գիտական լուրջ փորձեր էին։ Սեսիայի մասնակիցները հնարավորություն ունեցան ծանոթանալու բազմաթիվ զեկուցումների ու հաղորդումների՝ նվիրված տակավին Կիևյան Ռուսիայի շրջանից ընդհուպ մինչև մեր օրերը առկա հայ-ուկրաինական կապերին, Լվովի և Լեհաստանի իշխանության տակ գտնված Արևմտյան Ուկրաինայի բազմաթիվ այլ քաղաքների հայ զաղթավայրերի պատմությանը, Սովետական իշխանության տարիներին հայ և ուկրաինական ժողովուրդների եղբայրական բարեկամությանը, ինչպես նաև աղբյուրագիտական բնույթի մի քանի արժեքավոր ելույթների։

Սովետական շրջանի պատմությանը վերաբերող զեկուցումներում ու հաղորդումներում լուսարանվում էին Սովետական իշխանության տարիներին հայ և ուկրաինական ժողովուրդների միջև եղած տնտեսական ու մշակութային կապերը, նրանց անբաժանելի բարեկամության պատմությունը, որը զանազան դարերի խորքից, իր իսկական ամրապնդումն ու ծաղկումն ապրեց միայն Հոկտեմբերյան ռևոլյուցիայից հետո։ Այսպես, պատմական գիտությունների ղեկավար Ա. Բ. Հարությունյանը և պատմական գիտությունների թեկնածու Կ. Բ. Ուլոմյանը հանդես եկան ժայ և ուկրաինական ժողովուրդների բարեկամությունը կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանում համատեղ զեկուցմամբ, պատմական գիտությունների թեկնածու Գ. Ի. Կոպալչովը և Պ. Պ. Սեմիլետովը Եվրոպի և Ստանիսլավի ժողտնտիստների տնտեսական կապերը Հայկական ՍՍՌ-ի հետ հաղորդմամբ, պատմական գիտությունների թեկնածու Գ. Մ. Շևչովը և Ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Ռ. Կիրչերը ելույթներ ունեցան Սովետական իշխանության տարիներին հայ-ուկրաինական կուլտուրական կապերի հարցի շուրջը, պատմական գիտությունների թեկնածու Ե. Մ. Խալեյանը պատմեց Հայրենական պատերազմի տարիներին Ուկրաինայում գործող հայ պարտիզանների մասին, իսկ պատմական գիտությունների ղեկավար Ա. Ն. Մնացականյանը ուշադրաժ զեկուցում կարգաց Անդրկովկասում Սովետական իշխանության համար մղված պայքարում ուկրաինական ժողովրդի զավակների ունեցած մասնակցության մասին։ Նշված բոլոր զեկուցումներն էլ աչքի էին ընկնում փաստական նյութի հագեցվածությամբ, գիտական ընդհանրացումներով, հետաքրքիր ու թարմ մտքերով։

Գիտական սեսիայի աշխատանքներում նշանակալից տեղ հատկացվեց Լվովի հայ զաղութի պատմությանը։ Դա բացատրվում է ոչ միայն այդ զաղութի երբեմնի մեծությամբ ու նշանակությամբ, այլև Լվովի պատմական արխիվում նրա մասին պահպանված հարուստ ու բազմակողմանի փաստաթղթերով, որոնց, ինչպես և առհասարակ Լեհաստանի իշխանության տակ գտնված ուկրաինական շրջանների հայ զաղութների պատմության ուսումնասիրության բնագավառում, վերջին տարիներին, ակադեմիկոս Ի. Պ. Կրիպյակևիչի ղեկավարությամբ, Լվովում գիտական լուրջ գործ է կատարվում։

14—15-րդ դարերի լվովահայ գաղութի վերաբերյալ ընդհանրացնող մի զեկուցում կարգաց նախ Ի. Պ. Կրիպյակնիշը, որը մի շարք թարմ ու հիմնավոր մտքեր առաջ քաշեց լվովում հայերի հաստատման, նրանց զբաղմունքների, տնտեսական և իրավա-քաղաքական վիճակի մասին: Նա մասնավորապես ցույց տվեց, որ հայերը լվովում սկսել են հաստատվել 13-րդ դարի երկրորդ կեսերից, հիմնականում զբաղվել են արհեստներով և առևտրով, մեծ դեր են խաղացել հատկապես միջազգային և ներմուծվող առևտրի մեջ և որպես առանձին համայնք՝ ունեցել են իրենց վոյտն (վարչապետը) ու ավադների խորհուրդը, օգտվել են հայկական իրավունքից: Պատմական գիտությունների թեկնածու Ս. Տ. Բելիցկին խոսեց կաթոլիկացման դեմ լվովի հայերի մղած պայքարի մասին, իսկ լվովի պատմական թանգարանի գիտաշխատակից Ն. Կ. Կրիվոնոսը մի ուշադրավ հաղորդում արեց 17-րդ դարում արևմտաուկրաինական շրջանների առևտրի զարգացման մեջ լվովի հայ գաղութի ունեցած դերի մասին և այդ դերը մատնանշելու համար լուսարանեց արխիվային մի շարք նոր փաստաթղթեր, որ ինքը հայտնաբերել էր քաղաքի պատմական արխիվում: Լվովի հայ գաղութին վերաբերող հետաքրքիր ելույթներից էր դոցենտ Վ. Ս. Կուլչիցկու հաղորդումը Գոշի «Դատաստանագիրքը» լվովահայ գաղութում օգտագործելու մասին: Ունկնդիրների հետաքրքրությունը շարժեց փիլիսոփայական գիտությունների դոկտոր Վ. Կ. Ջալոյանի բովանդակալից զեկուցումը 17-րդ դարի հայ փիլիսոփայական մտքի նշանավոր ներկայացուցիչ Ստեփանոս Լվովցու (Լեհացու) մասին: Վ. Կ. Ջալոյանը հանդամանորեն շարադրելով վերջինիս փիլիսոփայական աշխարհայացքը, նշեց ու արժեքավորեց նրա կատարած մի շարք թարգմանությունները, որոնց թվում՝ Արիստոտելի «Մետեֆիզիկան», Լաժ ընդունելությունը գտավ պատմական գիտությունների թեկնածու Վ. Կ. Ոսկանյանի զեկուցումը, որտեղ արխիվային ուշադրավ փաստաթղթերի հիման վրա լուսաբանվում էր լվովի և հարևան մյուս հայ գաղութների վերաբերմունքը դեպի հայ ազատագրական պայքարը: Վ. Կ. Ոսկանյանը լուսաբանեց արժեքավոր նյութեր հայկական այդ գաղութների առաջին գործիչների վերաբերյալ, որոնք անտարբեր չեն գտնվել իրենց հայրենիքի ազատագրական խմորումների հանդեպ և աշխատել են աշակցել դրանց:

Զեկուցումների ու հաղորդումների մի զգալի մասն էլ նվիրված էր Ուկրաինայի հայկական մյուս գաղթավայրերի պատմությանը: Ընդլայնելով սեսիայում քննարկվող հարցերի շրջանակը, դրանցից մի քանիսը թե՛ ընդգրկած նյութով և թե՛ մեկնաբանություններով նոր խոսք էին ասում այդ գաղթավայրերի պատմության մի շարք խնդիրների շուրջը: Այդ առումով չի կարելի չընդգծել պատմական գիտությունների թեկնածու Դ. Ի. Միշկոյի հաղորդումը, որ վերաբերում էր զրեթե շուսումնասիրված մի խնդրի, այն է՝ 15—16-րդ դարերի Կիևի հայկական գաղութի կյանքին: Պատմական գրականությունից հայտնի է, որ այդ շրջանի Կիևի հայ գաղութի պատմության մասին միայն կցկտուր տեղեկություններ կան զերմասական կայսր Ռուդոլֆ 2-ի կողմից 1594 թ. Զապորոժյի կազակների մոտ ուղարկված դեսպան Էրիկ Լաստու «Ճանապարհորդական նոթերում», որ 1873 թ. թարգմանաբար հրատարակել է պրոֆեսոր Ֆիլիպ Բրունը՝ իր արժեքավոր ծանոթագրություններով հանդերձ: Կրկնում ենք, դրանք միայն մի քանի կրցկտուր տեղեկություններ են Կիևում ապրող առանձին հայերի և հայ եկեղեցիների մասին: Դ. Ի. Միշկոյի հաղորդումը, որին հիմք են ծառայել արխիվային նոր նյութերը, ամփոփ և բովանդակալից մի շարադրանք էր Կիևում ապրող հայերի զբաղմունքների, նրանց իրավունքների, ունեցվածքի և քաղաքի պաշտպանությանը նրանց ունեցած մասնակցության վերաբերյալ: Անհետաքրքիր չէր նաև պատմական գիտությունների թեկնածու Վ. Վ. Գրաբովցկու հաղորդումը Սնյատինի հայերի մասին. նա ամփոփ տեղեկություններ հաղորդեց գաղութի հիմնադրման, նրա զբաղմունքների մասին, ընդգծեց հայերի դերը արհեստների և առևտրի զարգացման մեջ, կանգ առավ գաղութի իրավական օրգանների, ինչպես նաև գաղութի վերացման պատճառների վրա:

Ինքնատիպ և ուշադրավ մի զեկուցումով հանդես եկավ պատմական գիտությունների թեկնածու Վ. Ռ. Գրիգորյանը: Նա ուսումնասիրել էր Լեհաստանի տիրապետության տակ գտնված ուկրաինական շրջանների հայկական գաղութներում կազմակերպված երիտասարդական միաբանությունների՝ «Կտրիճվորաց եղբայրությունների» պատմությունը, բնորոշել դրանց խնդիրները՝ իրեն տնտեսական օգնության և համագործակցության հիման վրա համատեղ պայքարի կազմակերպությունների, շեշտել Հայաստանից բերված տրադիցիայի ուժով դրանց առաջնաշու հանգամանքը:

Թեմատիկ առումով սեսիան պատշաճ տեղ էր հատկացրել ուլղակի հայ-ուկրաինական կապերը լուսաբանող յեկուցումներին: Թեև բնույթով դրանք տարբեր էին, բայց նրանց բոլորի միջով կարմիր թելի նման անցնում էր պատմական կապերի թեման, իհարկե տարբեր ձևերով ու զուսավորումներով՝ համապատասխան տվյալ զեկուցման թեմատիկ

առանձնահատկություններ: Հին շրջանի հայ-սլավոնական կապերի խնդիրը, օրինակ, քննական կերպով դրված էր Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Ս. Տ. Երեմյանի զեկուցման մեջ, որ պատմա-աշխարհագրական զուգահեռներ էր անցկացնում 12-րդ դարի սկզբներին գրված ռուսական «Ժամանակագրական տարեգրության» և Հովհան Մամիկոնյանի «Տարոնի պատմության» միջև: Այդ գործերի միջև անցկացրած գիտական զուգահեռների միջոցով փաստարկելով անունների և բովանդակության նմանությունը, Ս. Տ. Երեմյանը առաջ էր քաշում նույնը՝ մեկը մյուսի վրա ազդելու, ավելի շուտ հայկականը ռուսականի վրա փոխազդելու հարցը: Մի փոքր այլ թեքումով նույն հարցերն էր քննարկում պատմական գիտությունների թեկնածու Մ. Յա. Ռաչևսկին իր «Կիևյան Ռուսիայի կազմավորման շրջանում հայ-ռուսական կապերի հարցի շուրջը» հաղորդման մեջ: Նա փորձեց հիմնավորել իր այն միտքը, թե վերոհիշյալ պատմական երկու գործերի սյուժետային նմանությունը արդյունք է այն փոխազդեցության, որ կարող էր տեղի ունենալ մեր թվարկության 1-ին հազարամյակի երկրորդ կեսերին Փոքր Ասիա և Անդրկովկաս եկած սլավոնական ցեղերի և հայերի միջև:

Միջնադարում հայերի և ուկրաինացիների, ավելի շուտ Արևմտյան Ուկրաինայում գտնված հայ զաղութների բնակիչների և ուկրաինացիների առնչությունները 15—18-րդ դարերում հանգամանորեն հետազոտված էին պատմական գիտությունների թեկնածու Յա. Դ. Իսաևիչի զեկուցման մեջ, որտեղ կարևոր ուշադրություն էր դարձվում կաթոլիկացման դիմ հայերի և ուկրաինացիների մղած համատեղ պայքարին, նրանց միջև եղած տնտեսական ու մշակութային կապերին:

Հայ-ուկրաինական կապերն ուսումնասիրելու տեսակետից կարևոր ներդրում պիտի համարել պատմական գիտությունների թեկնածու Յ. Գ. Շևչենկոյի հաղորդումը հայ կազակների մասին: Մատնանշելով հայ կազակների վերաբերյալ եղած նյութերը, նա այնուհետև ցույց տվեց այն մասնակցությունը, որ նրանք ունեցել են կազակային զորամասերի շարքերում 1648—1654 թթ. ուկրաինական ժողովրդի մղած ազատագրական պատերազմներին:

Սեսիայում կարգացված աղբյուրագիտական բնույթի զեկուցումներում ու հաղորդումներում լուսաբանվում էին հայկական աղբյուրների նյութերը ուկրաինացիների մասին և ուկրաինական արխիվային նյութերը հայկական զաղութների մասին: Այդ տեսակետից արժեքավոր էր Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ, պրոֆեսոր Լևոն Մելիքսեթ-Բեկի զեկուցումը «Հայ աղբյուրները հերսոնեսի մասին» թեմայով: Զեկուցողը մեծ բարեսիղճությամբ ի մի էր հավաքել բոլոր այն տեղեկությունները, որ բովանդակում են հայկական աղբյուրները Տավրիկյան հերսոնեսի վերաբերյալ. դրանք հիմնականում վարձարանական (նահատակագրական) բնույթի աղբյուրներից և 10—11-րդ դարերի հայ հեղինակ Ասողկի «Պատմութիւն տիեզերական» աշխատությունից բաղկած նյութեր էին: Սակայն պրոֆեսոր Մելիքսեթ-Բեկը չբավարարվեց միայն դրանով. նա միաժամանակ կատարեց հնագիտական պեղումներով հայտնաբերված նյութերի համեմատություններ՝ ցույց տալու համար Հայաստանի և հերսոնեսի միջև եղած կապը և հաստատելու այն կարծիքը, որ այդ շրջանում հերսոնեսում գոյություն է ունեցել հայկական բնակչություն:

15-րդ դարից մինչև 19-րդ դարի 30-ական թվականները ընկած ժամանակամիջոցում ուկրաինական զանազան քաղաքների մասին հայ աղբյուրներում պահպանված վկայությունների վերաբերյալ արժեքավոր և բովանդակալից զեկուցում էր ներկայացրել պատմական գիտությունների թեկնածու Վ. Հակոբյանը: Նրա լուսաբանած նյութերը վերաբերում էին Լվով, Օստրոգ, Յարոսլավ, Սեյաստին, Ստանիսլավ և Կամենեց քաղաքների սոցիալ-տնտեսական կյանքին, թարեկարգությունը, քաղաքական զանազան իրադարձություններին:

Ուկրաինական քաղաքներում գոյություն ունեցած երբեմնի հայ զաղութների պատմությունը ուսումնասիրողներին բիրիոգրաֆիական բնույթի օգնություն ցույց կտան Լվովի Հասարակական գիտությունների ինստիտուտի գիտաշխատող Յա. Ռ. Դաշկևիչի զեկուցումը՝ «Ուկրաինական պատմագրության ներդրումը Ուկրաինայի հայ զաղութների ուսումնասիրման մեջ», ինչպես նաև Ռևրաինական ՍՍՌ Լվովի Կենտրոնական Պետական պատմական արխիվի գիտնական Ն. Զ. Վրադիի հաղորդումը՝ «Ուկրաինական ՍՍՌ Լվովի Կենտրոնական պետական արխիվի վավերագրական մատյանները որպես Ուկրաինայի հայկական բնակավայրերի պատմության ուսումնասիրման կարևոր աղբյուր»:

Ահա սրանք էին այն զեկուցումներն ու հաղորդումները, որ լսեց ու քննարկեց գիտական սեսիան: Ինչպես երևում է, դրանք հիմնականում լուսաբանում են Լեհաստանի տիրապետության տակ գտնված Արևմտյան Ուկրաինայի հայկական զաղութների պատմությունը և հայ-ուկրաինական պատմական կապերն ու բարեկամությունը այդ երկր՝ ժողովուրդների գոյատևության տարրեր շրջաններում: Ոնականաբար, սեսիայում բարձրացված մի շարք հարցեր հետագու

առավել խոր ուսումնասիրման կարիք ունենւմ Բայց սեփականում դրանց բարձրացումն անգամ ունի գիտական կարևոր նշանակություն, որովհետև այն խթանում է գիտական հետազոտաշխատանքը: Այդպիսի մի խթան կհանդիսանա նաև այն ծանոթությունը, որ սեփական գնացած հայ պատմաբանները ստացան լվովի հայկական հնություններից և մանավանդ նրա պատմական վերահիշյալ արխիվում պահպանված հայկական գաղութին վերաբերող նյութերից: Այդ նյութերը ղեկավարված են քաղաքային և ինքնավարական դատարանների վավերագրական մատյաններում, Հայկական կոնսիստորիայի գործերում, ինչպես և Արևմտյան Ուկրաինայի այն քաղաքների վերաբերյալ եղած գործերում, որտեղ հայկական բնակչություն է եղել: Այդ նյութերը տակավին սպասում են իրենց պրպտողին. դա հայ պատմաբանների կարևոր խնդիրներից մեկը պիտի լինի:

Գիտական հետազոտ համատեղ աշխատանքը ուժեղացնելու տեսակետից կարևոր էին այն որոշումները, որ ընդունեցին սեփականի մասնակիցները: Որոշվեց՝ առաջիկա 2—3 տարիների ընթացքում Երևանում գումարել հայ-ուկրաինական պատմական կապերին և բարեկամությանը նվիրված գիտական երրորդ սեփական և բացի հայ ու ուկրաինացի գիտնականներից նրան մասնակից դարձնել նաև միութենական ուսպուրիկանների և ժողովրդական ղեկավարությանի երկրորդների պատմաբաններին: 1963 թ. կիսում գումարվելու է կոորդինացիոն խորհրդակցություն, որը պիտի քննարկի «Ուկրաինայի հայկական բնակավայրերի պատմություն» աշխատության պրոսպեկտը և համատեղ գիտական ուսումնասիրությունների հետ կապված այլ հարցեր: Որոշվեց նաև մոտակա ժամանակներում առանձին ժողովածուով հրատարակել գիտական երկրորդ սեփականում կարգացված ղեկուցումներն ու հաղորդումները: Սեփական ուկրաինական և հայ գիտնականների կարևորագույն խնդիրներից մեկը համարեց աղբյուրագիտական աշխատանքների ուժեղացումը, որը հնարավորություն պիտի ընձեռի առանձին ժողովածուներով լույս ընծայել ուկրաիններեն փաստաթղթերը հայկական գաղութների մասին և հայ աղբյուրները՝ Ուկրաինայի և ուկրաինացիների վերաբերյալ:

Այսպիսով, թե՛ իր քննարկած ղեկուցումներով ու հաղորդումներով և թե՛ ընդունած որոշումներով Հայաստանի և Ուկրաինայի պատմաբանների գիտական այս երկրորդ սեփական նշանակալից շափով նպաստելու է այժմյան Ուկրաինայի տերիտորիայում եղած հայկական գաղթավայրերի, հայ-ուկրաինական պատմական կապերի և երկու ժողովուրդների եղբայրական բարեկամության պատմության ուսումնասիրման գործին:

Մ. Վ.